



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 09Լ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՏԱՍՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 101 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի **ողջամիտ ժամկետում** դատաքննության իրավունք կամ դատաքննության ընթացքում ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն՝

«4. Միջնորդությունները դատավորի կողմից պետք է քննվեն անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստանալու հաջորդ օրը:

Բնակարանի խուզարկության միջնորդությունները պետք է քննվեն անհապաղ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի համաձայն՝

«2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն է տալիս այդպիսի միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացման համար միջնորդող մարմնի գտնվելու վայրի դատարանը:

(...)

4. Միջնորդությունը քննարկում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությունը ներկայացնող պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ: Միջնորդությունը պետք է քննարկվի և որոշում կայացվի այն ստացվելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի համաձայն՝

«2.Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը **ենթակա է անհապաղ քննման** նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ (...):»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավակարգավորումները՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս դատարան ներկայացված համապատասխան միջնորդությունները պետք է քննարկվեն և լուծվեն **անհապաղ կամ օրենքով սահմանված սեղմ ժամկետներում**՝ անկախ այն հանգամանքից՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից նման միջնորդությունները ներկայացվել են աշխատանքային, թե ոչ աշխատանքային օրերին և ժամերին:

Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.12.2017թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-34-Ն ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ առաջին ատյանի դատարաններում հերթապահություն սահմանելու կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի «ՀՀ առաջին ատյանի դատարաններում հերթապահություն սահմանելու մասին» թիվ 101 որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 30-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2018թ. հունվարի 29
ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2018թ. հունվարի 29-ի թիվ 09Լ որոշման

Կ Ա Ր Գ

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՏԱՍՐ ԴԱՏԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների՝ անհապաղ քննության ենթակա միջնորդությունների քննությունն ապահովելու նպատակով, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին սահմանվում է հերթապահության ներգրավման ենթակա դատավորների ժամանակացույցը (այսուհետ՝ ժամանակացույց):

2. Ժամանակացույցը հաստատվում և, անհրաժեշտության դեպքում, դրանում փոփոխությունները կատարվում են դատարանի նախագահի կողմից:

Ժամանակացույցով հերթապահության ներգրավման ենթակա դատավորների նստավայրերը և նստավայրերի վերաբերյալ ժամանակացույցում կատարված փոփոխությունները ենթակա են հրապարակման Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Հաստատված ժամանակացույցը մինչև նախորդող ամսվա 25-ը, իսկ ժամանակացույցում վերը նշված փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ սեղմ ժամկետներում, ուղարկվում են ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին՝ ստանալու պահից երկօրյա ժամկետում այն Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:

3. Դատարանի նախագահի կողմից անհրաժեշտության դեպքում կարող են ներգրավվել հերթապահության լրացուցիչ դատավորներ՝ հաստատված ժամանակացույցից դուրս:

4. Դատարանի նախագահն անհրաժեշտության դեպքում կարող է ընդունել համապատասխան իրավական ակտ՝ դրանով սահմանելով սույն կարգով նախատեսված պահանջների կիրառման առանձնահատկությունները:

5. Դատավորների հերթապահության ներգրավումն իրականացվում է այնպիսի հերթականությամբ, որպեսզի ապահովվի դատավորների հերթապահության հավասարաչափ ներգրավվածությունը, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարումը:

6. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների՝ անհապաղ քննության ենթակա միջնորդությունների քննությանն օժանդակելու նպատակով աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին հերթապահություն է սահմանվում նաև աշխատակազմի աշխատակիցների համար:

7. Աշխատակազմի աշխատակիցների հերթապահության ժամանակացույցը կազմվում է աշխատակազմի ղեկավարի կողմից՝ նկատի ունենալով ինչպես ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները, դատարանի նախագահի կողմից սահմանված ժամանակացույցը, այնպես էլ աշխատակազմի աշխատակիցների հավասարաչափ հերթապահության ներգրավման անհրաժեշտությունը:

8. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների՝ անհապաղ քննության ենթակա համապատասխան միջնորդությունն ստացվելուց անմիջապես հետո հերթապահ աշխատակիցն այդ մասին անհապաղ տեղեկացնում է դատարանի նախագահին և ժամանակացույցով հերթապահության ենթակա դատավորին:

9. Հերթապահ աշխատակիցն ստացված փաստաթղթերը գրանցում է համապատասխան էլեկտրոնային կամ թղթային մատյաններում և այն հանձնում է հերթապահ դատավորին:

10. Հերթապահ աշխատակիցն իրականացնում է դատական նիստի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները:

11. Դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով, իսկ հատուկ համակարգչային ծրագրի բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրման եղանակով:

12. Հերթապահության ներգրավված դատավորների և աշխատակազմերի աշխատակիցների արտաժամյա աշխատաժամանակը հաշվառվում է ընդհանուր աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում և հատուցվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

2.1 Ժամանակացույցը կազմվում է 2 օրինակից՝ մեկ օրինակը պահվում է տվյալ դատարանի աշխատակազմում, մյուս օրինակը՝ Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի կենտրոնական մարմնում:

2.2 Ժամանակացույցն առնվազն պետք է ներառի՝

- ա) դատարանի անվանում, նստավայր, հասցե,
- բ) հերթապահության ենթակա դատավորի անուն, ազգանուն,
- գ) հերթապահության ժամանակահատված,
- դ) դատարանի (նստավայրի) կոնտակտային տվյալներ: